ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(իրականացված հարցման կարգով)

Քաղ. Երևան 11 մայիսի 2020թ.

2020թ-ի մայիսի 4-11-ը տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Տեխնիկական տնօրեն.
Ա. Ղոսալմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի էլ. Արտադրամասի պետ.
Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍԱԿ և ՄԻԲ-ի պետի պ/կ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և ԳԲ-ի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Եռաֆազ կցորդիչ	6 900
2.	Ներքին տեղակայման վարդակ	7 200
3.	Հոսանքի շղթաների փորձարկման տերմինալ	40 000
4.	Փոխադրովի հողանցման սարք	58 000
5.	Ներքին տեղակայման անջատիչ	5 700
6.	Ճնշման տրանսմիթոր	1 600 000
7.	Ավտոմատ անջատիչ եռաֆազ ,0,44վ,40Ա	5 600
8.	Ջերմափոխանակիչի հովացուցիչ (вентилатор)	100 000
9.	Հովացուցիչ (Fan)	1 154 000
10.	Կաբելային ծայրապանակ	20 000
11.	Ճնշման տրանսմիթոր	1 800 000
12.	Ճնշման տրանսմիթոր	788 700
13.	Ջերմաստիճանի տրանսմիթոր	1 700 000

14.	Ռելե 24վ	18 600
15.	Վերջույթային անջատիչ	116 720
16.	Վերջույթային անջատիչ	49 300
17.	ճնշման անջատիչ	315 250
18.	Մալուխ	225 000
19.	Միացման USB լար	3 500
20.	Մալուխ ПВС 3*1.5մմ2	14 500
21.	Մարտկոցի լիցքավորիչ	4 900
22.	Արեոմետր	12 000
23.	Էլեկտրաչափիչ աքցան փոքր հոսանքի (калибратор-мультиметр с клещами, Current Clamp Meter)	197 740
24.	Բարձ ջերմաստիճանի չափիչ սարք (Тепловизор)	4 870 320
25.	էլ. կոնդենսատոր փոփոխական լարման	496 000
26.	էլ. կոնդենսատոր փոփոխական լարման	81 000

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի մայիսի 4-ին, ժամը «15:00»-ին: ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ կետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ ստացվել է հարցում 2020թ.-ի ապրիլի 28-ին և հարցմանը պատասխանվել է 2020թ-ի ապրիլի 30-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	Ք. Աբովյան 3-րդ մ/շ 12/27	armen8181@mail.ru
2	Էկոմիքս ՍՊԸ	Ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 60/2	tenders@360shinbaza.am
3	Ա/Ձ Հասմիկ Օհանյան	-	-

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Ա/Ձ Հասմիկ Օհանյանի հայտը չի բավարարում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես մասնակիցը չի կարողացել ներբեռնել հայտը www.armeps.am համակարգ, ինչը հիմք է հանդիսանում մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:
- ՊԻՊԱՍ ՖՈՒԴ և ԷԿՈՄԻՔՍ ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- ՊԻՊԱՍ ՖՈՒԴ և ԷԿՈՄԻՔՍ ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- ՊԻՊԱՍ ՖՈՒԴ և ԷԿՈՄԻՔՍ ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակցի զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «Х»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1*	-	-	Էկոմիքս ՍՊԸ	32033,33	38440
18	1	X	Էկոմիքս ՍՊԸ	94560	113472
20*	-	-	Էկոմիքս ՍՊԸ	15583.33	18700
23*	-	-	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	230000	276000

24*	-	-	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	4700000	5640000
25	1	X	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	400000	480000
26*	1	X	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	70000	84000

*տվյալ չափաբաժինների մասով (1-ին, 20-րդ, 23-րդ, 24-րդ, և 26-րդ) վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Ա. Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. ՊԻՊԱՍ ՖՈՒԴ և Էկոմիքս ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:
3. Ընթացակարգը 2-17-րդ, 19-րդ, 21-րդ, և 22-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած և հաստատել «**ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը** 2-17-րդ, 19-րդ, 21-րդ, և 22-րդ **չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին**» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
4. Նիստը կասեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար:
5. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել 1-ին և 20-րդ չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակից՝ Էկոմիքս ՍՊԸ-ին, 23-րդ, 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակից՝ ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ին, բանակցությունների վարման մասին:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Էկոմիքս ՍՊԸ-ի գնային առաջարկը 1-ին և 20-րդ չափաբաժինների մասով, իսկ ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ի գնային առաջարկը 23-րդ, 24-րդ և 26-րդ չափաբաժինների մասով գերազանցում են **ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/43** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 20-րդ, 23-րդ, 24-րդ և 26-րդ չափաբաժիններով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գները, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝

ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ի կողմից ներայացվեց գնման ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով նոր նվազեցված գնային առաջարկ՝ 81 000 ՀՀ դրամ, այլ առաջարկներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 18-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Էկոմիքս ՍՊԸ-ին, իսկ 25-րդ և 26-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ին:
2. Ընթացակարգը 1-ին, 20-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած և հաստատել «**ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-20/39 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին, 20-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին**» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ղոսալմյան _____

Դ. Մադոյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Վարդապետյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____